**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2**

Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 2023 թվականի
հոկտեմբերի 18-ին կայացած գիտխորհրդի նիստի

Օրակարգում՝

1. Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի «Սոցիալական և կլինիկական հոգեբանության» ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի տեղակալման մրցույթ:
2. Դոցենտի գիտական կոչում ստանալու գործընթացին մասնակցելու երաշխավորության հարցը:
3. ա/«Քրեական արդարադատության հոգեբանություն և դատահոգեբանական փորձաքննություններ›› մագիստրոսական ծրագրի հաստատում:
   բ/«Կրիմինալոգիա›› մասնագիտացմամբ միջֆակուլտետային մագիստրոսական ծրագրի մասնակցության երաշխավորություն:
4. Թեկնածուական ատենախոսության ղեկավարման թույլտվության հարց:
5. Ընթացիկ հարցեր

Մինչ օրակարգին անցնելը Ա. Բաղդասարյանը առաջարկեց քվեարկությամբ հաստատել Պապոյան Վարդուհի Ռոբերտի՝ ԵՊՀ ընդհանուր հոգեբանության ամբիոնի պրոֆեսոր, հ.գ.թ ֆակուլտետի գիտխորհրդի գիտական քարտուղարի ընտրության հարցը:

1. Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի «Սոցիալական և կլինիկական հոգեբանության» ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի մրցույթին մասնակցելու համար դիմել է հ.գ.դ., պրոֆ. Գ. Շավերդյանը:

Ա. Բաղդասարյանը ներկայացրեց Գ. Շավերդյանի գործունեությունը, մանկավարժական փորձը, գիտական

ներուժը: Գ. Պետրոսյանը նշեց և բարձր որակավորեց Գ. Ծավերդյանի մասնագիտական արդյունավետությունը:

Քվեարկության համար ընտրվեց հանձնաժողով՝ Ա. Ղարագուլյան և Ա. Հակոբջանյան: 29-ը անդամներից ներկա էին 25-ը: Քվեարկության արդյունքում 25-ը մասնակիցների քվեաթերթիկները բաշխվեցին՝ 24-կողմ և 1 անվավեր: Առաջարկվեց գործերը ներկայացնել ԵՊՀ-ի նիստին:

2. Քննարկվեց դոցենտի գիտական կոչում ստանալու գործընթացին մասնակցելու երաշխավորության հարցը: Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետից դիմել էին՝

- փ.գ.թ. Նելլի Ալավերդյանը Փիլիսոփ. և հոգեբ. Ֆակուլտետի դեկանի տեղակալ՝ Փիլիսոփայության պատմության, տեսության և տրամաբանության ամբիոն

- փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի սոցիալական փիլիսոփայության և բարոյագիտության ամբիոնի ասիստենտ , փ. գ . թ . Կարինե Յարալյանը րտահայտվեցին՝ Ա. Բաղդասարյանը, Վ. Պապոյանը, Հ,Հովհաննիսյանը, Հ. Ավանեսյանը:

Որոշեցին, որ թեկնածուները համապատասխանում են դոցենտի կոչման շնորհմանը:

3. Քննարկվեց Սոցիալական և կլինիկական հոգեբանության ամբիոնի կողմից ա/«Քրեական արդարադատության հոգեբանություն և դատահոգեբանական փորձաքննություններ» մագիստրոսական ծրագրի/ ԿԾ ղեկավար, հ. գ . թ . ,դոց. Դ. Ամիրյան/ և բ/«Կրիմինալոգիա» մասնագիտացմամբ միջֆակուլտետային մագիստրոսական ծրագրի մասնակցության երաշխավորության հարցը: Արդյունքում երաշխավորեցին մագիստրոսական ծրագրերը:

Ա. Բաղդասարյանը նշեց նաև, որ ֆակուլտետ է դիմել Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի ռեկտորը համատեղ մագիստրոսական ծրագիր իրականացնելու համար:

4. Թեկնածուական ատենախոսության ղեկավարման թույլտվության համար խորհուրդ է դիմել սոցիալական փիլիսոփայության և բարոյագիտության ամբիոնի դոցենտ՝ Նարինե Մկրտչյանը: Փաստաթղթերը և գիտխորհրդի որոշումը կներկայացվեն ասպիրանտուրայի բաժին և ըստ ընթացակարգի ԲՈԿ:

5. Ընթացիկ հարցեր:

Քննարկվեց ատենախոսության թեմայի վերանվանումը:

ՈՒԽ-ի նախագահը ներկայացրեց ուսանողների բողոքները՝

- Միջանկյալ քննության հարցաշարը միջօրս չի տրամադրվել ուսանողներին
- Ֆակուլտետի մաքրության հարցը, հավաքարարների աշխատանքի թերագնահատումը
- Սեմինարական խմբերի ավելացում
- Քաղ. պաշտպանության առարկայից դժգոհություն, այն անցնում է օնլայն
- Դասախոսները ցանկալի է վերահսկեն ուսանողների վարքը և թույլ չտան օգտվել հեռախոսներից դասի ընթացքում
- Գնահատականները ժամանակից ուշ են ներկայացվում

Նիստի նախագահ՝ Ա. Բաղդասարյան

Նիստի քարտուղար՝ Վ. Պապոյան